

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնվեց Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի մրցանակը

Հունվարի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի «Ուղղափառ ժողովուրդների միասնության ամրապնդման գործում հատկանշական գործունեության, հասարակության կյանքում քրիստոնեական արժեքների հաստատման և ամրապնդման համար» Ալեքսի Բ Պատրիարքի անվան 2009 թ. մրցանակի տվչության արարողությանը: Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի մրցանակը շնորհվում է պետությունների, կառավարությունների և խորհրդարանների ղեկավարների, Եկեղեցիների հովվապետների, հասարակական խոշոր գործիչների՝ ուղղափառ հանրության կյանքում քրիստոնեական բարոյագիտության բարձր արժեքների հաստատման, Արևելյան քրիստոնեության միջավայրում պատմականորեն ձևավորված պետությունների տնտեսական և քաղաքական կապերի ամրապնդման գործում ունեցած մեծ ավանդի համար:

Հունվարի 21-ին Մոսկվայի Սուրբ Ամենափրկիչ տաճարի եկեղեցական ժողովների սրահում Նորին Սրբություն Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ն, ով նաև Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, Վեհափառ Հայրապետին և Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևին հանձնեց ուղղափառ աշխարհում հեղինակավոր այդ մրցանակը: Կիրիլ Պատրիարքի և Հիմնադրամի նախագահ Վ. Ալեքսենկի կողմից մրցանակներ շնորհվեցին նաև կինոռեժիսոր Էմիր Կուստուրիցային (Սերբիա) և Ս. Վլադիմիրի ուղղափառ հոգևոր ճեմարանին (ԱՄՆ):

Պարգևների հանձնման հանդիսավոր արարողության ընթացքում ներկաներին իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը: Շնորհակալություն հայտնելով Կիրիլ Պատրիարքի գլխավորած Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին՝ Նորին Սրբությունն իրեն շնորհած մրցանակը նկատեց իբրև վկայություն հավատակից երկու ժողովուրդների, Եկեղեցիների ու պետությունների բարեկամական հարաբերությունների:

«Աստծո կամքով օրհնվել է Քրիստոսի հանդեպ սիրո վեմին հաստատված եղբայրությունը մեր Եկեղեցիների, օրհնվել է մեր ժողովուրդների բարեկամությունը, և նույնական են դարձել մեր երկրների շահերը: Հայ-ռուսական դարավոր բարեկամությունը կռվել ու թրծվել է մեր ժողովուրդների կողք կողքի պայքարով, կողք կողքի արարումով: Այն վկայված է հոգևոր, մշակութային, քաղաքական, տնտեսական հաստատուն ու ամուր կապերով, մտավոր և գիտական ձեռքբերումներով, անշրջելի ու հարաճուն գործակցությամբ և ներթափանցել է ընտանեկան հարկերից ներս: Հիրավի, աշխարհագրական հեռավորությունը խոչընդոտ չեղավ և խոչընդոտ չէ մեր երկրների դաշնակցության», - նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ անդրադառնալով երկու

ժողովուրդների դարավոր եղբայրությանը: Հայոց Հովվապետը կարևոր նկատեց ջանքերի մեկտեղումը՝ հանուն մեր երկրների զորացման, կյանքի բարօրության և երջանկության, ժողովուրդների առջև ծառայող խնդիրների հաղթահարման: Խոսելով հոգևոր կյանքի վերածննդյան կարևորության մասին՝ Վեհափառ Հայրապետը նշեց. «Առ Աստված հավատքի, հոգևոր-բարոյական արժեքների զորությամբ է, որ մարդկային հոգուն անշրջելի պիտի լինի ընդհանուր բարիքի ձգտումը և բարի արգասիքներ պարգևեն խաղաղության, արդարության, ազատ ապրելու իրավունքի հիմնարար սկզբունքները»:

Նորին Սրբությունը մաղթեց, որ Բարձրյալի սերը և հանապազ առաջնորդությունը ուղեկից լինեն մեր ժողովուրդներին, մեր երկրների պետական այրերին, մեր Եկեղեցիների ուխտապահ հոգևոր դասին, որպեսզի մեր կյանքով ու գործերով Աստված փառաբանվի և շենանան մեր Հայրենիքները և ամուր մնա ու հարատևի մեր բարեկամությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մրցանակի զուամարը փոխանցեց Երևանում կառուցվող ռուս ուղղափառ եկեղեցու հիմնադրամին:

Մոսկվա այցի ընթացքում Նորին Սրբությունը Կրեմլի Ս. Աստվածածնի վերափոխման տաճարում ներկա գտնվեց նաև Կիրիլ Պատրիարքի կողմից մատուցված Ս. Պատարագին, որի ավարտին երկու Հովվապետերը հանդես եկան պաշտոնական խոսքով:

Նույն օրը Վեհափառ հայրապետը հանդիպում ունեցավ Մոսկվայի Պատրիարքարանի Արտաքին հարաբերությունների բաժնի պատասխանատու Վոլոկալամի Իլարիոն արքեպիսկոպոս Ալֆենի հետ:

###